ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի խոսքը «Level - up» միջազգային ուսանողական գիտաժողովին

Հայաստանի Հանրապետության հարգարժան վարչապետ,

Մեզ համար բարձր պատիվ է հյուրընկալել Ձեզ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Ուսանողական խորհրդի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի համատեղ նախաձեռնությամբ կազմակերպված միջազգային ուսանողական գիտաժողովին:

Պարոն վարչապետ,

Հարգելի հյուրեր, ներկաներ, ուսանողներ

Ուսանողական տնտեսագիտական գիտաժողովների կազմակերպումը մեզ մոտ ավանդույթ է, որը վերջին տարիներին հատկապես ամրապնդվել է՝ ընդլայնելով մասնակիցների շրջանակները, ներառելով այլ երկրների ուսանողների: Սա դարձել է բաց և կայուն հարթակ, որտեղ ուսանողները քննարկում են տնտեսության ամենատարբեր ոլորտներին և ուղղություններին վերաբերող հարցեր, բարձրացնում հիմնախնդիրներ և հանդես գալիս առաջարկություններով:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում 2011թ թվականից սկսվել է բարեփոխումների նոր շրջան՝ «Մենք փոխվում ենք» կարգախոսի ներքո: Պահպանելով համալսարանական ավանդույթները՝ մենք սկսեցինք հաստատության զարգացման նոր ծրագիր, որը ներառում էր բազմաթիվ ուղղություններ՝ սկսած համալսարանի կերպարի՝ արտաքին տեսքի փոփոխությունից, Բրենդբուքի ստեղծումից մինչև կրթության որակի բարձրացում, հետազոտական աշխատանքների աշխուժացում, միջազգային կապերի հաստատում, ուսանողներին և աշխատակիցներին ուղղված սոցիալական ծրագրերի իրագործում, հանրային կապերի զարգացում, գրադարանի թվայնացում, միջավայրի արդիականացում, տեխնիկական վերազինում: Այսօր մենք ունենք որոշակի ձեռքբերումներ, որոնց շարքում կցանկանայի առանձնացնել «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ստեղծումը, համալսարանի մասնակցությունը Տեմպուսի և «Էրազմուս +»-ի ծրագրերին, գրադարանային ֆոնդի թվայնացումը, Հայաստանում եզակի QR գրադարանի գործարկումը: Հիմնանորոգվել են մեր համալսարանի բոլոր մասնաշենքերը, վերակառուցել ենք համալսարանի բակը, որը ամֆիթատրոնով ու մյուս հնարավորություններով այսօր ծառայում է թե' մեր ուսանողներին և թե' մեր

աշխատակիցներին: Տեխնիկական վերազինման, համալսարանի վարչական ստորաբաժանումների և լսարանների կահավորման և կրթօջախի արդիականացման աշխատանքները ևս գրեթե ավարտված են: Մեր օրակարգում են նոր ծրագրեր, որոնց իրագործումը, հուսով եմ, կտա իր արդյունքը:

Հարգելի ներկաներ

Մեր գլխավոր խնդիրը բարձր գիտելիքներով մրցունակ մասնագետների պատրաստումն է, որոնք ուսումն ավարտելուց հետո կգտնեն իրենց արժանի տեղը աշխատաշուկայում: Սա է պատճառը, որ մենք կրթության որակի բարելավմանը զուգահեռ չափազանց կարևորում ենք բուհում գիտահետազոտական աշխատանքների զարգացումը: «Ամբերդ» հետազոտական կենտրոնն իր գիտահետազոտական գործունեությամբ փորձում է իրագործել հետազոտական համալսարան դառնալու մեր տեսլականը, նաև աշխատում տնտեսագետ-փորձագետների հարթակ դառնալ, որոնց ուսումնասիրությունները կարող են օգտակար լինել նաև մեր Կառավարությանը: Այստեղ ցանկանում եմ նշել նաև, որ Կենտրոնի գործունեությունը 2016թ. ուշադրության է արժանացել Ռազմավարական հետազոտությունների ռուսական ինստիտուտի կողմից՝ «Ուղեղային կենտրոնները ԱՊՀ երկրներում և Վրաստանում. կառուցվածքը, նպատակները, զարգացման հիմնական միտումները» զեկույցում:

Մենք փորձում ենք նաև համալսարանի գիտահետազոտական գործունեության մեջ ներգրավել մեր ուսանողներին՝ նրանց հնարավորություն տալով ոչ միայն զարգացնել հետազոտելու կարողությունները, այլև գումար վաստակել: Եվ այս համատեքստում է, որ մեզ համար ուրախալի է տեսնել ուսանողների նախաձեռնողականությունը ոչ միայն ժամանցային, այլև գիտական միջոցառումներ կազմակերպելիս: Հուսով եմ, այս գիտաժողովը ևս կտա ցանկալի արդյունք՝ հնարավորություն ընձեռելով ուսանողներին քննարկելու տնտեսագիտական թեմաներ, վեր հանելու հիմնախնդիրներ:

Շնորհակալություն ուշադրության համար:

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ